

# Տարեկան Ծանուցում

## Միաձեռն բողոքի ընթացակարգ

Լիազորում Բալիֆորնիայի Օրենսգրքի Կանոնադրությամբ  
Վերնագիր V, Բաժին 4600-4687

Փաստենաչի դպրոցներու միացեալ շրջանը պատասխանատու է համաձայնութեամբ դաշնակցային եւ նահանգի օրէնքի կանոնադրութեան եւ որդեգրած է միաձեռն բողոքի ընթացակարգը (UCP) որ պատասխանէ գանգատներու եւ անհամաձայնութեանց: Վերահսկիչը կամ որոշում ընդունողը շրջանի միաձեռն բողոքը ընթացակարգէն ձրի կրկնօրինակներ հասանելի պիտի ունենայ:

Դպրոցի շրջանը բողոքները պիտի հետազոտէ եւ փորձէ տեղական մակարդակով լուծել օգտագործելով այն քաղաքականութիւնն ու ընթացակարգը որոնք որդեգրուած են ներքոյ: Այս ընթացակարգը պիտի օգտագործուի երբ պատասխան պիտի տրուին բողոքներուն ենթադրեալ անօրէն խտրականութեան փորձի հիմք ունենալով իրական կամ նշմարելի յատկանիշ կապուած հետեւեալի հետ սեռ, սեռական կողմնորոշում, ցեղային խումբի ինքնութիւն, ցեղ, նախահայրեր, ազգային ծագում, կրօն, գունային, մտաւոր կամ մարմնական անկարողութիւն եւ կամ ձախողիլ նահանգային կամ դաշնակցային օրէնքի պահանջը կատարելու չափահասի դաստիարակութեան ծիրէն ներս, համախմբուած հաստատական օգնութեան ծրագիրներ, ասպարէզի մասնագիտութիւն, Ամերիկեան հնդկի կրթութիւն, գաղթողի կրթութիւն, արհեստավարժ կրթութիւն, երեխայի խնամք եւ զարգացման ծրագրեր, երեխայի սնուցման ծրագրեր եւ մասնաւոր կրթական ծրագրեր:

Շրջանի բողոքի համակարգողի հասցէն Chief Human Resources Officer 351 S. Hudson Ave., Pasadena, CA 91101; (626) 396-3600 x88700.

Շրջանի (UCP) բողոքի ծրագրի եւ հետագայ տեղեկութեան գործընթացի մասին կրնաք գիտնալ <http://www.pusd.us>, շրջանի գրասենեակէն, եւ շրջանի ամէն մէկ դպրոցի գրասենեակէն:

Այս գործելակերպի մէջ ոչ մէկ բան կ'արգիլէ գանգատող մը հետապնդելու քաղաքացեական օրէնքի լուծում դպրոցի շրջանի բողոքի ընթացակարգէն դուրս: Անօրէն խտրականութեան բողոքները կարելի է ուղակիօրէն գրանցել ԱՄՆ-ի կրթութեան բաժանմունքի քաղաքացիական իրաւանց գրասենեակ:

### Մակարդակ 1 - Բողոքի գրանցում

Որեւէ աշակերտ, ծնող կամ այլ անհատ շրջանին մօտ կրնայ գրանցել գրաւոր բողոք, ներկայացնելով այն հիմքը ըստ որոյ ան կը հաւատայ որ խտրականութեան ենթարկուած է, կամ պատճառ կը հանդեսանայ այն որ շրջանը (PUSD) եւ դաշնակցային օրէնքը համաձայնեցուած չեն: Ենթադրեալ խտրականութիւնը վեց ամսուայ ընթացքին բողոքողը կրնայ գրաւոր բողոքել ենթադրեալ խտրականութեան վերաբերեալ: Շրջանը կրնայ բողոք գրանցելու ժամանակաշրջանը, լաւ նպատակի համար, իննիսուն օրով երկարաձգել:

Բողոքողը կրնայ գրանցել (1) մէկը որ անձամբ տառապած է անօրէն խտրականութենէ, կամ (2) ոեւէ մէկը որ կը հաւատայ որ անհատ մը կամ խումբ մը անհատներ ենթարկուած են անօրէն խտրականութեան: Բողոքի գրանցման եւ ապացոյցներու ներկայացմանը բողոքողին կրնայ փաստաբան մը օգնել:

Եթէ բողոքողը չի կրնար իր բողոքը գրել քանի մարմնապէս անկարող է կամ անուս է, դպրոցի շրջանը պիտի օգնէ բողոքողին որ գրանցէ իր բողոքը:

### Մակարդակ 2 - Գանգատի հետաքննութիւն

Շրջանի բողոքի համակարգողը ամէն բանական ջանք պիտի գործադրէ որ հետազօտէ բողոքը վերաքննելով պատշաճ փաստաթուղթերը եւ հարցաքննէ բոլոր վկաններուն որոնց տեղեկութիւնները կապ ունին բողոքի հետ:

Համակարգողը բողոքողին եւ շրջան/դպրոցի ներկայացուցիչներուն պիտի թույլատրէ որ ապացոյցներ եւ վկաներու յայտարարութիւններ ներկայացնեն եւ ապահովէ պատշաճ տեղեկութիւն բողոքի մասին:

Եթէ բողոքողը մերժէ հետազօտութեան հետ համագործակցիլ գանգատը կրնայ հանուիլ փաստի պակասի առկայութեան պատճառով: Եթէ շրջան/դպրոցը մերժէ համագործակցիլ հետազօտութեան հետ, սա կը նշանակէ թէ օրէնքը ռոնսահարուած է եւ ճարը պետք է բողոքողի օգտին ըլլայ:

Խտրականութեան գանգաւորի հետազոտութիւնը պիտի ղեկավարուի աշդպիսի ձեւով որ պաշտպանուի կողմերու գաղտնիքը: Ոչ մէկ կողմ փոխվրէժի պիտի չ'ենթարկուի բողոքի հետազոտութեան մասնակցելու համար եւ որեւէ ենթարտեալ փոխվրէժ պիտի ճիշդ հետազոտուի եւ պատասխանատուութեան ենթարկուի:

Շրջանի բողոքի ստացման 60 օրուայ ընթացքին շրջանը պիտի գրաւոր տեղեկութիւն հրատարակէ կապուած գանգաւորողի հետ: Տեղեկութիւնը պիտի ամփոփէ առած քայլերը որ հետաքննուի բողոքը, հաստատէ շրջանի եզրակացութիւնը իբր խտրականութիւն տեղի ունեցած է, բացատրէ պատճառները եզրափակման համար, եւ նկարագրէ որեւէ ուղղիչ գործունէութիւն որը ձեռք պիտի առնուի: Գրաւոր որոշումը նոյնպէս պիտի պարունակէ նկարագրութիւն մը թէ ինչպէս պետք է բողոքարկել որոշումը Քալիֆորնիոյ կրթութեան բաժնին:

Շրջանը կրնայ երկարացնել դատավճիռի ժամանակահատուածը եթէ ժամանակ երկարաձգելու գրաւոր համաձայնագիր ստանայ գանգաւորէն:

**Մակարդակ 3- Վերաքննութեան պահանջ Քալիֆորնիոյ Ոստցման բաժանմունքին**

Եթէ բողոքողը իր բողոքի վերաբերեալ դժգոհ է շրջանի հետաքննութենէն կամ եզրակացութենէն կրնայ բողոքարկել շրջանի որոշումը, վերաքննելու համար գրաւոր պահանջ պետք է դրկէ Քալիֆորնիոյ կրթութեան բաժանմունք: Բողոքարկումը պետք է դրկուի շրջանի որոշումը ստանալէն ետք 15 օրուայ ընթացքին:

Բողոքարկումը պետք է նկարագրէ թէ ինչու որոշումը վերաքննութեան պահանջ ունի եւ եթէ շրջանը ճիշդ ձեւով իրողութիւնը քննեց եւ կամ եթէ օրէնքը սխալ կիրարուեցաւ:

Բողոքագիրը պետք է UCP բնօրինակ բողոքի եւ շրջանի որոշման օրինակներ պարունակէ:

**Կապ հաստատել անձերու ծրագրերու եւ ծառայութիւններու համար որոնք երաշխաւորուած են UCP-ի կողմէ:**

Այս անձիք որոնք օրէնքի եւ ծրագրերու իմացողներն են նշանակուած են հետաքննելու համար:

Ծրագրեր	Կապ	Հեռախօս
Չափահաս դաստիարակութիւն ընդհանուր եւ հիմնական	Mr. Michael Seaton	(626) 396-3600 x 88429
Ազգային դպրոցի սնունդի ծրագիր	Mr. Wes Howard	(626) 396-5850 x 89397
Հաստատուած բաժանմունքային օգնութիւն ներառելով հետեւեալները <ul style="list-style-type: none"> <li>• Քալիֆորնիոյ արհեստավարժ զարգացում</li> <li>• Տնտեսական ընդհարման օգնութիւն</li> <li>• Ամերիկայի դպրոցները բարելաւելու գործունէութիւն վերնագիր I եւ վերնագիր VI</li> <li>• Դպրոցի Հաստատուած փոխկապակցուած բարելաւում</li> </ul>	Dr. Meg Abrahamson	(626) 396-3600 x 88478
Իւրաչատուկ դաստիարակութիւն	Ms. Elizabeth Blanco	(626) 396-3600 x 88600
Արհեստներու դաստիարակութիւն	Mr. Michael Seaton	(626) 396-3600 x 88429
Ոչ խտրականութեան պահանջներ եւ քաղաքացիական օրէնքի երաշխաւորներ	Ms. Shelly James	(626) 396-3600 x 88776

Աւելորդ ընդհանուր տեղեկութեան կամ միաձեւ բողոքի ընթացակարգի համար, կապուէք բողոքները վարող ծառայութեան միաւորին, Քալիֆորնիոյ ոստցման բաժանմունք, P.O. Box 944272, Sacramento, CA 94244-2720; Telephone (916) 319-0929